# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

## «ՀԱ-ՊԸԱՇՁԲ-16/3» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի

**ք. Երևան** **24 սեպտեմբերի 2016թ.**

**ժամը՝ 11:00**

**<u>Մասնակցում էին՝</u>**
**Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Սաքեյան**
**Հանձնաժողովի անդամներ՝ Է. Եղոյան, Տ. Հովակիմյան, Պ. Ֆրենգյան, Ա. Մարկոսյան**
**Հանձնաժողովի քարտուղար՝ Տ. Մարգարյան**

**<u>Օրակարգ</u>**
**<u>հայտերի բացման և գնահատման նիստի մասին</u>**

1. **Տեղեկություն «ՀԱ-ՊԸԱՇՁԲ-16/4» ծածկագրով մրցույթի հայտերի բացման մասին.**

**«ՀԱ-ՊԸԱՇՁԲ-16/4»** ծածկագրով մրցույթի հայտերը փաստաթղթային ձևով բացվել են հայտարարության և հրավերի հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 7-րդ աշխատանքային օրը՝ **2016 թվականի սեպտեմբերի 24-ին, ժամը 11:00-ին,** ք. Երևան, Ծովակալ Իսակովի 50 հասցեում «Հայատոմ» ՓԲԸ-ի ճարտարագիտական մասնաշենքի 1004 սենյակում:

**Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:**

2. **Տեղեկություն «ՀԱ-ՊԸԱՇՁԲ-16/4» ծածկագրով մրցույթի գնման առարկայի 1-ին չափաբաժնի ընդհանուր նախահաշվային գնի վերաբերյալ**

**Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի /Այսուհետ Կարգ/ 44-րդ կետի առաջին ենթակետի դրույթներով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման առարկայի յուրաքանչյուր չափաբաժնի ընդհանուր նախահաշվային գինը՝ մեկ թվով արտահայտված.**

| Չ/հ | Աշխատանքի անվանումը | Տեխնիկական բնութագիրը | Աշխատանքի ընդհանուր նախահաշվային գինը՝ մեկ թվով արտահայտված (ՀՀ դրամ) |
|---|---|---|---|
| 1 | ՁՋԻՌ-440 լիամասշտաբ վարժասարքի չափիչ սարքերի վերափոխում, տրամաչափում և վահանակի սնման համակարգի սխեմաների մշակում | Կատարվելիք աշխատանքներում պետք է իրականացվեն ՀԱԷԿ-ի թիվ 2 էներգաբլոկի գործող վարժասարքի պահուստային չափիչ սարքերի վերափոխման և տրամաչափման աշխատանքներ: Չափիչ սարքերը պետք է օգտագործվեն ՀԱԷԿ-ի լիամասշտաբ վարժասարքի ընդլայնման շրջանակներում համակարգի մեջ ինտեգրվող նոր վահանների լրակազմման համար:<br>Վարժասարքում որպես անալոգային և թվային մուտքերի և ելքերի սարքվածքներ օգտագործվում են CAN արդյունաբերական ստանդարտի ցանցի հիմքի վրա աշխատող MAATEL մոդուլները, որոնք անալոգային ելքի համար ապահովում են 0-20 մԱ ստանդարտի ազդանշաններ:<br>Բացի այդ, աշխատանքները պետք է ներառեն չափիչ սարքերի էլեկտրասնուցման սխեմաների մշակում՝ անհրաժեշտ է մշակել վահանակների սարքերի սնման համակարգի սխեմաները չափիչ սարքերի մասով:<br>Առկա պահուստային չափիչ սարքերը իրենցից ներկայացնում են հետևյալ տեսակի սարքեր՝<br>– KC-1 տեսակի ինքնագրիչ սարքեր (22 հատ);<br>– Zeparex տեսակի ինքնագրիչ սարքեր (16 հատ); | 5,000,000.00 |

| | | | |
|---|---|---|---|
| | | – Սլաքային չափիչ սարքեր (15 հատ): <br> Աշխատանքները պետք է ընդգրկեն սարքերի դիմային մասի վերափոխումը՝ ՅԱԷԿ-ի Կառավարման Սրահում տեղադրված սարքերին համապատասխանեցնելու նպատակով, ինչպես նաև սարքերի տրամաչափում՝ 0-20 մԱ մուտքային ազդանշանով ճիշտ աշխատելու համար: <br> Սարքերի վերափոխման համար անհրաժեշտ բոլոր տարրերը և նյութերը պետք է ապահովվեն Կատարողի կողմից: <br> Աշխատանքների արդյունքում ակնկալվում է ստանալ վարժասարքի վրա կիրառելուն պատրաստ չափիչ սարքեր: | |

**Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:**

3. **Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և հասցեները.**

| Հ/հ | Մասնակցների անվանումները | Գտնվելու վայրը | Հեռախոսահամարը |
|---|---|---|---|
| 1 | «Տեխպրոգ» ՍՊԸ | ՀՀ, ք. Երևան, Քնաքեռ ՀԷԿ, տուն 9-11 | 093 35 23 94 |

**Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:**

4. **Տեղեկություն հայտեր պարունակող ծրարներ կազմման և ներկայացման համապատասխանության մասին.**

**«Տեխպրոգ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտեր պարունակող ծրարները կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

**Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:**

5. **Տեղեկություն յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտի (հայտում առկա փաստաթղթերի)՝ հրավերի պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.**

**«Տեխպրոգ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտերը (հայտում ներառված փաստաթղթերը) կազմվել են հրավերի պահանջների համապատասխան:

**Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:**

6. **Տեղեկություն մասնակիցների կողմից ներկայացրած գնային առաջարկների մասին**

**(ՀՀ դրամ)**

| Չ/հ | Մասնակցների անվանումները | Ինքնարժեք | Շահույթ | ԱԱՀ | Առաջարկված Ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|---|
| 1 | «Տեխպրոգ» ՍՊԸ | 4527270 | 452730 | - | 4980000 |

**Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:**

**Հանձնաժողովը որոշեց.**

1. **Ընթացակարգի 1-ին չափաբաժնի առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Տեխպրոգ» ՍՊԸ-ին, որպես ընթացակարգի բավարար գնահատված հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած միակ մասնակցի:**

**Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:**

7. **Տեղեկություն Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում կատարելու վերաբերյալ.**

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացնում առաջին և երկրորդ տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև սույն հրավերի 2.3 կետի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը[1]:
**Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0**

8. **Տեղեկություն հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման վայրի, օրվա և ժամի վերաբերյալ.**

**«ՀԱ-ՊԸԱՇՁԲ-16/3»** ծածկագրով մրցույթի մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել Կարգի 49-րդ կետով սահմանված պահանջներին համապատասխան փաստաթղթերը գնահատող հանձնաժողովի անդամներին փոխանցելու օրվան հաջորդող աշխատանքային օրը՝ **2016 թվականի հոկտեմբերի 3-ին, ժամը 11:00-ին**, ք. Երևան, Ծովակալ Իսակովի 50 հասցեում «Հայատոմ» ՓԲԸ-ի ճարտարագիտական մասնաշենքի 1004 սենյակում:

**Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0**

**Գնահատող հանձնաժողովի նախագահ՝** **Հ. Սաքեյան**

**Հանձնաժողովի անդամներ՝** **Է. Եղոյան**

**Տ. Հովակիմյան**

**Պ. Ֆրենգյան**

**Ա. Մարկոսյան**

**Հանձնաժողովի քարտուղար՝** **Տ. Մարգարյան**

---

[1] *Եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, ապա ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացությունը <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի մասով չի գնահատվում:*